ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(լրացումներով և փոփոխություններով 26.02.2022թ. դրությամբ)

I. Ընդհանուր դրույթներ

1. Հայաստանի Հանրապետության նոտարական պալատն (այսուհետ՝ Պալատ) ինքնակառավարման սկզբունքի և նոտարների պարտադիր անդամակցության վրա հիմնված՝ նոտարների մասնագիտական ոչ առևտրային կազմակերպություն է, որի նպատակը նոտարների շահերը ներկայացնելը և պաշտպանելն է, նոտարական գործունեություն իրականացնելիս նրանց օգնություն ցույց տալը և նոտարական էթիկայի կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացումը:

(փոփոխությունը հաստատված է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ)

2. Պալատն իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում պետական գրանցման պահից, որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

3. Պալատը պատասխանատվություն չի կրում իր անդամների, իսկ վերջին-ներս՝ պալատի պարտավորությունների համար:

4. Պալատն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, իր անվանմամբ՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով կլոր կնիք, դրոշմակնիք, խորհրդանիշ, որում պատկերված է մագաղաթ և փետուր. Մագաղաթի վրա գրված է ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, մագաղաթի վերևում գրված է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ բառերը, մագաղաթի ներքևի մասում աջ և ձախ ուղղություններով ժապավեններ են, որոնցից մեկի վրա գրված է պալատի անգլերեն անվանումը, մյուսի վրա ռուսերեն անվանումը, հաշվարկային հաշիվ բանկում, ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ: Պալատն ունի իր պաշտոնական կայքը՝ www.e-notary.am

(փոփոխությունը հաստատված է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.02.2022թ . թիվ 2 որոշմամբ)

5. Պալատի անվանումն է՝

հայերեն՝ «Հայաստանի Հանրապետության նոտարական պալատ»,

ռուսերեն՝ «Нотариальная палата Республики Армения»,

անգլերեն՝ «Notarial Chamber of the Republic of Armenia»:

6. Պալատի գործունեության տարածքը Հայաստանի Հանրապետությունն է: Պալատի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Զաքյան փողոց, 3 շինություն:

II. Պալատի գործունեությունը:

7. Պալատն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի, այլ օրենքների և իրավական ակտերի ու սույն կանոնադրությանը համապատասխան:

(լրացումը հաստատված է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 04.02.2017թ. թիվ 1 որոշմամբ)

8. Սույն կանոնադրության 1-ին կետում ամրագրված նպատակների իրականացմանն ուղղված Պալատը՝

1) կազմակերպում և համակարգում է Պալատի անդամների գործունեությունը՝ ուղղված քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների իրավունքների ապահովմանը և պաշտպանությանը.

2) հսկողություն է իրականացնում նոտարի կողմից՝ իր գործունեության ընթացքում էթիկայի կանոնների, վարչության որոշումների կատարման և սույն կանոնադրությամբ սահմանված պահանջների պահպանման նկատմամբ.

3) ներկայացնում և պաշտպանում է Պալատի անդամների իրավունքները և շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև այլ անձանց և կազմակերպությունների հետ հարաբերություններում, ինչպես նաև դատարանում.

4) նոտարական գործողությունների պրակտիկայի միասնականության ապահովման նպատակով ամփոփում է նոտարների գործունեության արդյունքները, հրապարակում է նոտարական գործունեության վերաբերյալ մեթոդական և տեղեկատվական-ուղեցույցային ձեռնարկներ, առաջարկում է ձևանմուշներ, ուղարկում է շրջաբերականներ,

5) կազմակերպում է նոտարների և նոտարների օգնականների ուսուցման և որակավորման բարձրացման գործընթացը, ինչպես նաև կարող է կազմակերպել նոտարների ստաժորների և նոտարական գրասենյակի աշխատակիցների ուսուցման և որակավորման բարձրացման դասընթացներ,

6) օրենքով նախատեսված դեպքում նոտարների նկատմամբ հարուցում է կարգապահական վարույթ, նոտարի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթով արդարադատության նախարարություն է ներկայացնում հաղորդում՝ իրեն ներկայացված նոտարական գործողությունների կամ նոտարի մատուցած այլ ծառայությունների բողոքների կամ դիմումների վերաբերյալ: Պալատը նոտարի նկատմամբ որպես կարգապահական տույժ կարող է կիրառել նախազգուշացում և նկատողություն:

7) կազմակերպում է լիազորությունները դադարեցրած նոտարի փաստաթղթերի ընդունման և դրանք նոտարական պալատի արխիվի կամ այլ նոտարի՝ դրանց հանձնման գործընթացը և հնարավորության դեպքում ապահովում է լիազորությունները դադարեցրած նոտարի մասնակցությունը Պալատին արխիվի հանձնման գործընթացին, բացառությամբ «Նոտարիատի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 8-րդ կետերի և 17-րդ հոդվածի 4-րդ մասի.

8) ապահովում է նոտարների մասնակցությունը ՀՀ արդարադատության նախարարության կողմից անցկացվող նոտարների թեկնածուների որակավորման ստուգման գործընթացին.

9) հարաբերություններ է հաստատում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և միջազգային կազմակերպությունների, քաղաքացիների միավորումների հետ.

10) ՀՀ արդարադատության նախարարություն է ներկայացնում նոտարների գործունեությանն առնչվող օրենքների կամ այլ իրավական ակտերի, ինչպես նաև դրանց փոփոխման ու լրացման վերաբերյալ առաջարկներ.

11) օրենքով սահմանված դեպքերում և կարգով, Պալատի անդամների ժողովի որոշմամբ առևտրային կազմակերպություններ ստեղծելու կամ դրանց մասնակցելու միջոցով իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն.

12) օրենքով սահմանված դեպքերում և կարգով տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն.

13) կազմակերպում է նոտարական արխիվային փաստաթղթերը համալրելու, հաշվառելու, պահպանելու և օգտագործելու հետ կապված աշխատանքները, ինչպես նաև այլ նոտարների՝ դրանց հանձնման գործընթացը.

14) ՀՀ արդարադատության նախարարի սահմանած կարգով պահպանում է գործունեությունը կասեցված նոտարի կնիքը և ճզմիչ կնիքը.

15) կազմակերպում է էլեկտրոնային նոտարի համակարգի սպասարկման գործընթացը, նոտարներին ապահովում է էլեկտրոնային նոտարի համակարգ մուտք գործելու հնարավորությամբ, էլեկտրոնային նոտարի համակարգում առաջացած տեխնիկակաան խնդիրների և թույլ տրված վրիպակների դեպքում ցուցաբերում է տեխնիկական աջակցություն.

16) իրականացնում է օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

(լրացումները և փոփոխությունները հաստատված են ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 04.02.2017թ. թիվ 1 որոշմամբ, 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ)

III. Վերահսկողությունը պալատի գործունեության նկատմամբ

9. Պալատի կողմից «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի, իրավական այլ ակտերի և պալատի կանոնադրական պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարությունը:

(փոփոխությունը հաստատված է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ)

10.Նոտարական պալատի կողմից սույն օրենքի, իրավական այլ ակտերի և պալատի կանոնադրական պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է արդարադատության նախարարությունը:

Նոտարական պալատի նախագահը պարտավոր է նոտարական պալատի ժողովի, վարչության կամ իր կողմից ընդունված որոշումների պատճենը, որոշումներն ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ուղարկել արդարադատության նախարարություն: Վերջինս իրավունք ունի դիմել դատարան անվավեր ճանաչելու համար նոտարական պալատի կամ նրա պաշտոնատար անձանց ու մարմինների կողմից ընդունված օրենքին, իրավական ակտերին ու նոտարական պալատի կանոնադրությանը հակասող կամ դրանցից չբխող որոշումները և այլ ակտերը:

Նոտարական պալատի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավունք ունեն օրենքով ուղղակի նախատեսված այլ պետական մարմինները:

(փոփոխությունը հաստատված է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ)

IV. Պալատի անդամները

11. Պալատի անդամ են համարվում միայն նոտարները:

12. Նոտարը Պալատի անդամ է դառնում օրենքով սահմանված կարգով նոտարի պաշտոնում նշանակվելու օրվանից:

13. Նորանշանակ նոտարը Պալատի ընդհանուր ժողովի առջև տալիս է հանդիսավոր երդում հետևյալ բովանդակությամբ.

“Ես՝ (անուն, հայրանուն, ազգանուն), ստանձնելով նոտարի պաշտոնը, երդվում եմ.

- գործել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն ու օրենքներին համապատասխան և պահպանել լատինական նոտարիատի միջազգային միության սկզբունքները.

-պահպանել նոտարական գաղտնիքը և նոտարական էթիկայի կանոնները.

- լիազորություններս իրականացնելիս լինել արդար և անկողմնակալ,

- կատարել ծառայողական պարտականություններս՝ աշխատելով արժանապատվությամբ, խորհրդակցելով խղճիս և պատվիս հետ.

- միշտ և ամենուր բարձր պահել նոտարի դերն ու հեղինակությունը”:

14. Նոտարի անդամությունը դադարում է օրենքով սահմանված կարգով պաշտոնից ազատվելու օրը:

V. Պալատի անդամների իրավունքները և պարտականությունները

15. Պալատի անդամներն իրավունք ունեն՝

1) ընտրել և ընտրվել Պալատի մարմիններում և հանձնաժողովներում.

2) մասնակցել Պալատի վարչության և այլ մարմինների նիստերին.

3) ստանալ անհրաժեշտ տեղեկություններ Պալատի մարմիններից.

4) ՀՀ արդարադատության նախարարություն կամ դատարան բողոքարկել պալատի մարմինների օրենքին և սույն կանոնադրությանը հակասող որոշումները.

5) առաջարկություններ ներկայացնել նոտարների մասնագիտական գործունեության և պալատի գործունեության կատարելագործման ուղղությամբ.

6) ունենալ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

16. Պալատի անդամները պարտավոր են.

1) պահպանել օրենքի, իրավական այլ ակտերի, սույն կանոնադրության պահանջները և էթիկայի կանոնները.

2) կատարել Պալատի կառավարման մարմինների՝ իրենց իրավասության շրջանակներում ընդունված որոշումները.

3) անձամբ մասնակցել Պալատի ընդհանուր ժողովին.

4) անձամբ մասնակցել Պալատի վարչության և հանձնաժողովների նիստերին՝ վերջիններիս հրավերով.

5) ժամանակին վճարել Պալատի անդամավճարները և Պալատի ընդհանուր ժողովի կողմից սահմանված այլ վճարները.

6) փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցել Պալատին իր մասնագիտական պատասխանատվության ռիսկի ապահովագրության մասին.

7) եռամսյակային հաշվետվություն ներկայացնել Պալատ՝ կատարված նոտարական գործողությունների և գանձված ծառայության վճարների վերաբերյալ:

(փոփոխությունը հաստատված է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ)

VI. Պալատի գործունեության կազմակերպումը

17. Պալատն իր գործունեությունը կազմակերպում է իր մարմինների և հանձնաժողովների միջոցով:

18. Պալատի բարձրագույն մարմինը Պալատի ընդհանուր ժողովն է:

19. Պալատի գործադիր մարմինը Պալատի վարչությունն է:

20. Պալատի կազմում գործում է երեք մշտական հանձնաժողով՝ նոտարական միասնական պրակտիկայի ապահովման և ուսումնամեթոդական հարցերով հանձնաժողով, էթիկայի հանձնաժողով և վերստուգիչ հանձնաժողով:

21. Ընթացիկ խնդիրների լուծման նպատակով կարող են ձևավորվել ժամանակավոր հանձնաժողովներ:

22. Մշտական հանձնաժողովի անդամները ընտրվում են Պալատի ընդհանուր ժողովի կողմից երեք տարի ժամկետով՝ գաղտնի քվեարկությամբ: Հանձնաժողովի անդամների թեկնածուներին առաջադրում է Վարչությունը կամ ինքնաառաջադրման միջոցով:

Հանձնաժողովի անդամներն իրենց պարտականությունները կատարում են հասարակական հիմունքներով:

Հանձնաժողովը ղեկավարում է հանձնաժողովի նախագահը: Հանձնաժողովի նախագահը ընտրվում է հանձնաժողովի անդամների կողմից՝ ձայների մեծամասնությամբ:

(լրացումը և փոփոխությունը հաստատված են ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ)

23. Հանձնաժողովները իրենց գործառույթներն իրականացնում են նիստեր գումարելու միջոցով: Հանձնաժողովի նիստերը արձանագրվում են: Հանձնաժողովները որոշումները ընդունում են ձայների մեծամասնությամբ:

24. Հանձնաժողովի գործունեությունը կարգավորվում է Վարչության կողմից հաստատված Հանձնաժողովի գործունեության կարգով:

25. կետը ուժը կորցրել է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ:

26. Պալատի ընթացիկ գործառույթներն իրականացնելու նպատակով ձևավորվում է աշխատակազմ :

(լրացումը և փոփոխությունը հաստատված են ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ)

VII. Նոտարական պալատի ընդհանուր ժողովի իրավասությունը

27. Պալատի բարձրագույն մարմինը նրա ընդհանուր ժողովն է, որին պատկանում է Պալատի իրավասությանը վերաբերող ցանկացած հարցի լուծում:

28. Պալատի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

1) Պալատի կանոնադրության ընդունումը, դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելը.

2) Պալատի տարեկան հաշվետվության հաստատումը.

3) Պալատի նախագահի, վարչության անդամների ընտրությունը և նրանց ազատումը.

4) Պալատի եկամուտների և ծախսերի հաշվեկշռի հաստատումը.

5) Պալատի վարչության առաջարկով նոտարների որակավորման հանձնաժողովի կազմում Պալատի ներկայացուցիչների կազմի հաստատումը.

6) Պալատի անդամների անդամավճարների և այլ վճարների չափի հաստա-տումը.

7) Պալատի աշխատակազմի հաստիքացուցակի և աշխատավարձերի չափի հաստատումը.

8) նոտարական էթիկայի կանոնների հաստատումը.

9) ընտրում է Պալատի նախագահին, տեղակալին, վարչության և մշտական հանձնաժողովների անդամներին:

VIII. Պալատի ընդհանուր ժողովի գումարման և անցկացման կարգը

29. Պալատի ընդհանուր ժողովը գումարվում է տարեկան մեկ անգամ: Ընդհանուր ժողովը կարող է գումարվել նաև առցանց եղանակով, եթե օրակարգում առկա չեն այնպիսի հարցեր, որոնք նախատեսում են գաղտնի քվեարկություն;

(փոփոխությունը հաստատված է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 04.02.2017թ. թիվ 1 որոշմամբ)

(լրացումը հաստատված է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ)

30. Պալատի արտահերթ ընդհանուր ժողովը գումարում է Պալատի վարչության նախագահը՝

1) իր նախաձեռնությամբ,

2) Պալատի վարչության առաջարկությամբ.

3) Պալատի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի առաջարկությամբ.

4) վերստուգիչ հանձնաժողովի առաջարկությամբ:

Պալատի վարչության նախագահի բացակայության դեպքում արտահերթ ժողովը գումարում է նրա տեղակալը:

31. Եթե 20 օրում վարչության նախագահը չի հրավիրում արտահերթ ժողով, ապա նախաձեռնողներն իրավունք ունեն հրավիրել արտահերթ ժողով:

32. Պալատի վարչությունը նոտարներին երկու շաբաթ առաջ ծանուցում է ժողովի անցկացման վայրի, ժամանակի և օրակարգի մասին, իսկ Արդարադատության նախարարությանը ոչ ուշ, քան ժողովից տասն օր առաջ հայտնում է ժողովի վայրի և ժամանակի մասին:

(լրացումը և փոփոխությունը հաստատված են ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 04.02.2017թ. թիվ 1 որոշմամբ, 26.02.2022թ. թիվ 2 որոշմամաբ)

33. Պալատի ընդհանուր ժողովին նոտարը մասնակցում է անձամբ: Առցանց եղանակով ընդհանուր ժողովի անցկացման դեպքում, անդամը համարվում է ժողովին մասնակցած, եթե հնարավոր է նրան տեսակապով նույնականացնել ժողովի ողջ ընթացքում:

(լրացումը հաստատված է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ)

34. Պալատի ընդհանուր ժողովը նախագահում է Պալատի վարչության նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ տեղակալը: Ժողովի քարտուղարն ընտրվում է Պալատի վարչության կազմից:

35. Պալատի ընդհանուր ժողովն իրավազոր է, եթե ներկա է Պալատի անդամների առնվազն երկու երրորդը:

36. Պալատի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են բաց կամ գաղտնի քվեարկությամբ՝ մասնակիցների ձայների մեծամասնությամբ: բացառությամբ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի:

37. Ժողովի ընթացքի և ընդունված որոշումների մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են Պալատի նախագահը և քարտուղարը:

IX. Պալատի վարչությունը

38. Վարչությունը Պալատի գործադիր մարմինն է, որը գործում է սույն կանոնադրության և իր կողմից հաստատված գործունեության կարգի համաձայն: Վարչությունն ընտրվում է Պալատի ընդհանուր ժողովի կողմից՝ ապահովելու համար Պալատի ընդհանուր ժողովի որոշումների իրականացումը և այն խնդիրների լուծումը, որոնք վերապահված չեն ժողովի բացառիկ իրավասությանը:

39. Պալատի վարչությունը կազմված է նախագահից, տեղակալից և երեք անդամից: Պալատի վարչության նախագահը միաժամանակ Պալատի նախագահն է:

40. Պալատի նախագահը և վարչության կազմն ընտրվում է Պալատի ընդհանուր ժողովի կողմից՝ գաղտնի քվեարկությամբ:

(փոփոխությունը հաստատված է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ)

41. Պալատի Նախագահի, նրա տեղակալի և վարչության անդամների թեկնածուները առաջադրվում են Պալատի անդամներից ձևավորված նախաձեռնող խմբի կողմից կամ ինքնաառաջադրման միջոցով սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: Պալատի նախագահ և տեղակալ կարող է ընտրվել որպես նոտար յոթ տարվա աշխատանքային փորձ ունեցող նոտարը, իսկ Վարչության

անդամ կարող է ընտրվել որպես նոտար հինգ տարվա աշխատանքային փորձ ունեցող նոտարը:

(փոփոխությունը հաստատված է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.12.2015թ. թիվ 4 որոշմամբ, 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ)

42. Պալատի նախագահի, նրա տեղակալի, վարչության անդամների և Պալատի մշտական հանձնաժողովների անդամների ընտրությունը կատարվում է առանձին-առանձին:

(լրացումը հաստատված է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ)

43 կետը ուժը կորցրել է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ:

44. Պալատի նախագահը և վարչության անդամներն իրենց պարտականությունները կատարում են՝ հասարակական հիմունքներով:

45. Վարչության և նախագահի լիազորությունների ժամկետը չորս տարի է: Վարչության անդամները և նախագահը չեն կարող անընդմեջ երկու անգամից ավելի ընտրվել նույն պաշտոններում:

Նորընտիր Պալատի նախագահի լիազորությունները ծագում են ընտրությունների արդյունքերի վերաբերյալ հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը ընդհանուր ժողովի կողմից հաստատվելու պահից և նույն պահից դադարում է նախորդ նախագահի լիազորությունները;

Նախորդ նահագահը Պալատի կնիքը, փաստաթղթերը և գույքը հանձնում է նորընտիր նախագահին լիազորությունները վայր դնելուց հետո հինգ օրվա ընթացքում:

(լրացումը հաստատված է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ)

46. Վարչությունն իր աշխատանքն իրականացնում է նիստեր գումարելու միջոցով: Վարչությունը նիստեր է գումարում առնվազն ամիսը մեկ անգամ: Արտահերթ նիստ կարող է գումարվել վարչության նախագահի, անդամների երկու երրորդի և ՀՀ արդարադատության նախարարի նախաձեռնությամբ: Վարչության նիստերին

կարող են մասնակցել նաև հանձնաժողովների նախագահները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

(լրացումը հաստատված է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ)

47. Նիստը գումարում և վարում է վարչության նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ վարչության նախագահի տեղակալը:

Վարչության անդամը պարտավոր է ներկա գտնվել նիստին: Երեք անգամ անընդմեջ անհարգելի բացակայության դեպքում վարչության անդամի լիազորությունները դադարում են:

Վարչության նիստերը կարող են գումարվել նաև առցանց եղանակով:

(լրացումը հաստատված է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ)

48. Վարչությունը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե դրան մասնակցում է վարչության անդամների կեսից ավելին: Վարչության որոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում վարչության նախագահի ձայնը վճռորոշ է:

49. Վարչության նիստում քննարկված հարցերը և ընդունված որոշումներն արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրվում է նիստին ներկա բոլոր անդամների կողմից:

50. Վարչության նախագահի և անդամի լիազորությունը վաղաժամկետ դադարեցվում է նրա գործունեությունը օրենքով սահմանված կարգով կասեցնելու, դադարեցնելու դեպքում:

Վարչության նախագահի և անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել Պալատի ընդհանուր ժողովի կողմից, որը կարող է հրավիրվել Պալատի անդամների երկու երրորդի նախաձեռնությամբ: Որոշումը համարվում է կայացված, եթե դրա օգտին քվեարկել է ժողովի մասնակիցների կեսից ավելին:

Վարչության նախագահի և անդամի լիազորությունը վաղաժամկետ դադարեցվում է նաև նրա գրավոր հրաժարականի դեպքում:

(լրացումը հաստատված է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ)

51. Վարչության անդամի լիազորությունը վաղաժամկետ դադարեցվելու դեպքում վարչության նախագահը 30 օրվա ընթացքում գումարում է Պալատի ընդհանուր ժողով ՝ ընտրություն անցկացնելու նպատակով:

Բացառիկ դեպքում, երբ վաղաժամկետ դադարեցվում է ամբողջ վարչության լիազորությունը, արտահերթ ընտրությունը նախաձեռնում է ՀՀ արդարադատության նախարարը՝ 15-օրյա ժամկետում:

IX.I ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ

51.1. Եթե Պալատի նախագահի կամ նրա տեղակալի պաշտոնում ընտրվելու համար առաջադրվել է մեկ կամ երկու թեկնածու, ապա նա ընտրված է համարվում ժողովի մասնակիցների ձայների մեծամասնությամբ: Եթե Պալատի նախագահի կամ նրա տեղակալի պաշտոնում ընտրվելու համար առաջադրվել է երկուսից ավելի թեկնածու, ապա ընտրված է համարվում ժողովի մասնակիցների կեսից ավելիի ձայները ստացած թեկնածուն, իսկ եթե նրանցից ոչ մեկը չի ստացել անհրաժեշտ ձայներ, ապա անցկացվում է կրկնակի քվեարկություն, որին մասնակցում են առավել ձայներ ստացած երկու թեկնածուն և ընտրված է համարվում ժողովին մասնակիցների առավել ձայներ ստացած թեկնածուն:

Եթե քվեարկվել է երկու թեկնածու, և նրանցից ոչ մեկը չի ընտրվել, ապա անցկացվում է նոր ընտրություն:

Եթե քվեարկվել է մեկ թեկնածու և նա չի ընտրվել, ապա անցկացվում է նոր ընտրություն:

51.2 Պալատի վարչության և մշտական հանձնաժողովների մեկ անդամի թափուր պաշտոնում ընտրվելու համար առաջադրված թեկնածուներից ընտրված է համարվում ժողովի մասնակիցների ձայների մեծամասնությունը ստացած թեկնածուն:

Պալատի վարչության և մշտական հանձնաժողովների մեկից ավելի անդամների ընտրության դեպքում ընտրված են համարվում առավել ձայներ ստացած քվեարկվող թափուր տեղերի քանակին համապատասխան թվով թեկնածուները:

51.3 Պալատի Նախագահի և նրա տեղակալի պաշտոններում ընտրվելու համար առաջադրված մեկ թեկնածուի դեպքում քվեաթերթիկի ձախ կողմում նշված է լինում նրա անուն, ազգանուն, հայրանունը, իսկ աջ կողմում “կողմ” և “դեմ” սյունակներ՝ ընտրության նշման համար: Պալատի Նախագահի կամ նրա տեղակալի պաշտոնում ընտրվելու համար առաջադրված երկու կամ երկուսից ավելի թեկնածուի դեպքում քվեաթերթիկի ձախ կողմում նշված է լինում նրանց անուն, ազգանուն, հայրանունը, իսկ աջ կողմում դատարկ սյունակներ՝ ընտրության նշման համար, ընդ որում քվեաթերթիկը վավեր է համարվում, եթե նրա վրա առկա է ընտրության մեկ նշում: Քվեաթերթիկում ընտրության նշումը կատարվում է լատիներեն “V” տառի տեսքով:

Եթե Պալատի վարչության և մշտական հանձնաժողովների անդամների թեկնածուները ստացել են հավասար քանակով ձայներ, ապա հավասար ձայներ ստացած թեկնածուների համար անցկացվում է կրկնակի քվեարկություն:

51.4 Պալատի վարչության և հանձնաժողովների անդամների պաշտոններում ընտրվելու համար առաջադրված մեկ թեկնածուի դեպքում քվեաթերթիկի ձախ կողմում նշված է լինում նրա անուն, ազգանուն, հայրանունը, իսկ աջ կողմում՝ “կողմ” և “դեմ” սյունակներ՝ ընտրության նշման համար, ընդ որում քվեաթերթիկը վավեր է համարվում, եթե նրա վրա առկա է ընտրության մեկ նշում: Երկու կամ երկուսից ավելի թեկնածուի դեպքում քվեաթերթիկի ձախ կողմում նշված է լինում նրանց անուն, ազգանուն, հայրանունը, իսկ աջ կողմում դատարկ սյունակներ՝ ընտրության նշման համար, ընդ որում քվեաթերթիկը վավեր է համարվում, եթե դրա վրա առկա է նշում, ոչ ավել քան նախատեսված է վարչության անդամների կամ տվյալ հանձնաժողովի թափուր տեղերի համար: Քվեաթերթիկում ընտրության նշումը կատարվում է լատիներեն “V” տառի տեսքով:

51.5 Նախաձեռնող խմբի կողմից /առնվազն 10 /տասը/ նոտարներից կազմված խումբ/ Պալատի Նախագահի թեկնածու առաջադրելու դեպքում նախաձեռնող խումբը ոչ ուշ, քան ընտրությունների անցկացման օրվանից 30 /երեսուն/ օր առաջ այդ մասին Պալատ են ներկայացնում խմբի անդամների կողմից ստորագրված ծանուցում՝ կցելով թեկնածուի համաձայնությունը մասնակցելու ընտրությանը:

Պալատի նախագահի թեկնածուի ինքնաառաջադրման դեպքում թեկնածուն ոչ ուշ, քան ընտրությունների անցկացման օրվանից 30 /երեսուն/ օր առաջ Պալատ է ներկայացնում ծանուցում՝ ընտրությանը մասնակցելու մտադրության մասին:

Ծանուցումներին կցվում են թեկնածուի ծրագիրը և ընտրություններին վերաբերող այլ փաստաթղթերը:

Ծանուցումները ներկայացնելու ժամկետի ավարտից հետո 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում Վարչությունը գումարում է արտահերթ նիստ՝ սահմանված ցենզերին թեկնածուների համապատասխանությունը ստուգելու համար, որից հետո ոչ ուշ, քան ընտրությունների անցկացման օրվանից 14 /տասնչորս/ օր առաջ հաստատված թեկնածուների ծրագրերը ուղարկվում են Պալատի անդամներին:

(լրացումը հաստատված է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ)

X. Պալատի վարչության լիազորությունները

52. Պալատի վարչությունը՝

1) ապահովում է Պալատի կանոնադրական խնդիրների կատարումը և անդամների ժողովի որոշումների իրականացումը.

2) ներկայացնում է Պալատը կազմակերպությունների հետ հարաբերություններում, անհրաժեշտության դեպքում նոտարական պալատի անունից ներկայացնում է առաջարկություններ և եզրակացություններ.

3) նոտարական պալատի ընդհանուր ժողով է ներկայացնում Պալատի հանձնաժողովների անդամների թեկնածությունները.

4) իր գործառույթների իրականացման համար կարող է ներգրավել Պալատի վարչության կազմի մեջ չմտնող այլ նոտարներ.

5) հաստատում է Պալատի տարեկան ծախսերի նախահաշիվը.

6) ընդունում է ներքին իրավական ակտեր.

7) հարուցում է կարգապահական վարույթ.

8) ենթակետը ուժը կորցրել է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ:

9) ենթակետը ուժը կորցրել է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ:

9.1) նոտարական միասնական պրակտիկայի ապահովման և ուսումնամեթոդական հարցերով հանձնաժողովի կողմից տրված դիրքորոշումների հիման վրա միասնական պրակտիկայի ապահովման նպատակով ընդունում է որոշումներ:

10) նոտարական գործունեության վերաբերյալ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ներկայացնում է Պալատի դիրքորոշումը.

11) նոտարների մասնագիտական որակավորումը բարձրացնելու նպատակով կազմակերպում է սեմինարներ, կոնֆերանսներ, գործուղումներ և նման այլ միջոցառումներ.

12) նոտարների գործունեության ամփոփման հիման վրա առաջարկություններ է ներկայացնում գործող օրենսդրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատա-րելու վերաբերյալ.

13) հետևում է նոտարների կողմից՝ մատուցվող ծառայությունների համար սահմանված վճարների ճիշտ գանձմանը.

14) կազմում է նոտարական էթիկայի կանոնների նախագիծը և ներկայացնում Պալատի ընդհանուր ժողովի հաստատմանը.

15) կազմակերպում է նորանշանակ նոտարների երդման արարողությունը և ցուցաբերում մասնագիտական աջակցություն.

16) վարում է Պալատի կայքը.

17) իրականացնում է օրենքով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

(լրացումը և փոփոխությունը հաստատված են ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ)

XI. Պալատի նախագահը

53. Պալատի նախագահն ի պաշտոնե նոտար է:

54. Պալատի նախագահը՝

1) հրավիրում է ընդհանուր ժողով և վարչության նիստեր.

2) համակարգում է ժողովի և վարչության նիստերի աշխատանքները.

3) առանց լիազորագրի գործում է պալատի անունից, ներկայացնում է նրա շահերը այլ մարմինների հետ հարաբերություններում.

4) կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Պալատի գույքը, պալատի անունից կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

5) Պալատի վարձու աշխատողների համար իրականացնում է գործատուի գործառույթներ.

6) հաստատված տարեկան ծախսերի նախահաշվին համապատասխան իրականացնում է ընթացիկ ծախսեր.

7) կազմակերպում է Պալատի հաշվապահական հաշվառումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով

8) իրականացնում է սույն կանոնադրությամբ Պալատի ընդհանուր ժողովի որոշումներով նախատեսված այլ լիազորություններ:

55. Պալատի նախագահի բացակայության դեպքում նրա գործառույթներն իրականացնում է տեղակալը: Եթե բացակայում է նաև նախագահի տեղակալը, ապա նախագահի գործառույթներն իրականացնում է վարչության տարիքով ավագ անդամը:

XII. Պալատի աշխատակազմը

56. Պալատի ընթացիկ գործունեությունն ապահովելու նպատակով ձևավորվում է աշխատակազմ և նշանակվում է աշխատակազմի ղեկավար: Աշխատակազմի ղեկավար չի կարող նշանակվել նոտարի պաշտոն զբաղեցնող անձը: Աշխատակազմի ղեկավարը պետք է ունենա բարձրագույն իրավաբանական կրթություն և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքի փորձ:

57. Աշխատակազմի ղեկավարը ենթակա է և հաշվետու Պալատի նախագահին և վարչությանը:

58. Աշխատակազմի ղեկավարը նշանակվում է Պալատի նախագահի կողմից՝ վարչության համաձայնությամբ:

59. Աշխատակազմի ղեկավարի պաշտոնում նշանակվող անձի՝ պաշտոնին համապատասխանությունը ստուգելու նպատակով, սահմանվում է փորձաշրջան մինչև երեք ամիս ժամկետով:

60. Աշխատակազմի ղեկավարի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը կարող է լուծվել Պալատի վարչության որոշմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

61. Աշխատակազմի ղեկավարն իր իրավունքներն իրականացնելիս և պարտականությունները կատարելիս պարտավոր է գործել՝ ելնելով Պալատի շահերից, բարեխիղճ և ողջամիտ: Աշխատակազմի ղեկավարը պատասխանատվություն է կրում իր լիազորությունները սահմանազանցելու կամ չարաշահելու հետևանքով Պալատին պատճառված գույքային վնասի համար:

62. Աշխատակազմի ղեկավարը՝

1) ղեկավարում է Պալատի աշխատակազմի ընթացիկ աշխատանքը.

2) վարում է Պալատի եկամուտների ու ծախսերի և Պալատի անդամների անդամավճարների հաշիվը.

3) վարում է նոտարների անձնական գործերը.

4) կազմակերպում է վարչության նիստերի անցկացումը.

5) կազմակերպում է նոտարների վերապատրաստման դասընթացների հետ կապված գործընթացը,

6) ամփոփում է Պալատի աշխատանքային տարեկան ծրագրերի վերաբերյալ Հանձնաժողովներից և Վարչությունից ստացված տեղեկատվությունը .

7) Պալատի նախագահի կողմից տրված լիազորագրի հիման վրա ներկայացնում և պաշտպանում է Պալատի շահերը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ հարաբերություններում, ինչպես նաև դատարանում.

8) Պալատի նախագահի կողմից տրված լիազորագրի հիման վրա կնքում է գործարքներ.

9) օրենքով սահմանված դեպքերում և կարգով Պալատի անունից տրամադրում է տեղեկատվություն.

10) կազմում և Պալատի վարչությանը ներկայացնում է հաշվետվություններ, ստանում և ՀՀ արդարադատության նախարարություն է ուղարկում նոտարների հաշվետվությունները.

11) տալիս է ցուցումներ, որոնք պարտադիր են Պալատի աշխատակիցների համար,

12) Պալատի վարչությանը ներկայացնում է Պալատի աշխատակազմի հաստիքացուցակը,

13) պատասխանատվություն է կրում աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած գաղտնի տեղեկատվությունը պահպանելու համար.

14) հետևում է վարչության որոշումների ժամանակին և պատշաճ կատարմանը.

15) իրականացնում է այլ լիազորություններ, որոնք բխում են Պալատի ընդհանուր ժողովի, նախագահի և վարչության որոշումներից և սույն կանոնադրությունից.

XIII. Վերստուգիչ հանձնաժողով

63. Վերստուգիչ հանձնաժողովը ստուգում է Պալատի ֆինանսական գործունեության և հաշվապահական հաշվառման օրինականությունը:

64. Վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր է տարին մեկ անգամ ստուգել Պալատի ֆինանսական գործունեությունը և ստուգման վերաբերյալ ընդհանուր ժողովին ներկայացնել հաշվետվություն: Հանձնաժողովն արտահերթ ստուգումներ կարող է իրականացնել Պալատի անդամների մեկ երրորդի կամ ՀՀ արդարադատության նախարարության նախաձեռնությամբ:

65. Վերստուգիչ հանձնաժողովն ընտրվում է Պալատի ընդհանուր ժողովի կողմից 3 անդամի կազմով՝ երեք տարի ժամկետով: Ընտրությունն անցկացվում է գաղտնի քվեարկությամբ:

66. կետը ուժը կորցրել է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ:

67. Վերստուգիչ հանձնաժողովն անկախ է և հաշվետու է միայն Պալատի ընդհանուր ժողովին: Հանձնաժողովի անդամը չի կարող լինել Պալատի այլ մարմնի անդամ:

68. Վերստուգիչ հանձնաժողովի անդամները Պալատի ֆինանսատնտեսական գործունեության հետ կապված հարցերով իրավունք ունեն մասնակցել վարչության նիստերին:

XIV. Վերստուգիչ հանձնաժողովի անդամների լիազորությունների դադարեցումը

69. Վերստուգիչ հանձնաժողովի անդամը կարող է հրաժարվել անդամությունից:

70. Վերստուգիչ հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են՝

1) եթե հանձնաժողովի անդամի՝ որպես նոտարի լիազորությունները կասեցվել կամ դադարեցվել են օրենքով սահմանված կարգով.

2) Պալատի ընդհանուր ժողովը անվստահություն է հայտնում հանձնաժողովին կամ նրա անդամին, եթե հանձնաժողովը կամ նրա անդամն իր պարտականությունները կատարում է ոչ պատշաճ:

71. Հանձնաժողովի անդամի լիազորությունը դադարելու դեպքում Պալատի նախագահի ներկայացմամբ վարչության կողմից նշանակվում է նոր անդամ, որի լիազորությունները գործում են մինչև Պալատի ընդհանուր ժողովի կողմից ընտրության անցկացումը:

72. Եթե դադարել է ամբողջ հանձնաժողովի կամ նրա անդամների երկու երրորդի լիազորությունները, ապա 30 օրվա ընթացքում Պալատի նախագահը հրավիրում է Պալատի արտահերթ ընդհանուր ժողով և անցկացնում ընտրություն: Ընտրված հանձնաժողովի կամ նրա անդամների լիազորությունները պահպանվում են ժամկետի մնացած մասով:

XV. Ստուգման կարգը

73. Վերստուգիչ հանձնաժողովն իրավասու է վարչությունից պահանջել ցանկացած փաստաթուղթ՝ կապված վարչության գործունեության հետ, այդ թվում ֆինանսական, հաշվապահական փաստաթղթերը, բացատրություններ պահանջել վարչության անդամներից և Պալատի աշխատակիցներից:

74. Վերստուգիչ հանձնաժողովի նախաձեռնությամբ Պալատի վարչության կողմից հրավիրվում է անկախ մասնագետ (աուդիտոր), որի աշխատանքը վճարվում է Պալատի բյուջեից:

(լրացումը և փոփոխությունը հաստատված են ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ)

75. Ստուգման արդյունքում Հանձնաժողովը կազմում է արձանագրություն, որը ներկայացվում է Պալատի ընդհանուր ժողովին:

(փոփոխությունը հաստատված է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ)

XVI. Էթիկայի հանձնաժողով

76. Էթիկայի հանձնաժողովը բաղկացած է 5 անդամից, քննում է նոտարների կողմից աշխատանքային կարգապահության և էթիկայի կանոնների խախտման դեպքերը:

77. Էթիկայի հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել առնվազն երեք տարվա նոտարական գործունեության փորձ ունեցող այն նոտարը, ով վերջին մեկ տարվա ընթացքում չի ենթարկվել կարգապահական տույժի:

(փոփոխությունը հաստատված է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.12.2015թ. թիվ 4 որոշմամբ)

78. Էթիկայի հանձնաժողովը իր լիազորություններն իրականացնելիս անկախ է Պալատի նախագահից, հաշվետու է Պալատի ընդհանուր ժողովին և Վարչությանը:

79. Էթիկայի հանձնաժողովն իր գործառույթներն իրականացնում է նիստեր գումարելու միջոցով, որի արդյունքներն արձանագրվում են: Էթիկայի հանձնաժողովի նիստերը գումարվում են Պալատի ընդհանուր ժողովի, Պալատի նախագահի և վարչության, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության նախաձեռնությամբ:

80. Էթիկայի հանձնաժողովը նոտարի կողմից աշխատանքային կարգապահության կամ էթիկայի կանոնների խախտումներ վերաբերյալ դիմում ստանալու դեպքում իրականացնում է կարգապահական վարույթ: Եթե վարույթի արդյունքում հայտնաբերվում են խախտումներ, էթիկայի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացնում Պալատի վարչությանը՝ նոտարին կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ:

(փոփոխությունը հաստատված է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ)

XVII. Նոտարական միասնական պրակտիկայի ապահովման և ուսումնամեթոդական հարցերով հանձնաժողով

81. Նոտարական միասնական պրակտիկայի ապահովման և ուսումնամեթոդական հարցերով հանձնաժողովը բաղկացած է յոթ անդամներից, միջոցներ է ձեռնարկում նոտարների մասնագիտական և գործնական հմտությունների բարձրացման և նոտարական միասնական պրակտիկայի ապահովման ուղղությամբ, մասնավորապես՝

1) կազմում է նոտարների վերապատրաստումների տարեկան ծրագրերը՝ ելնելով նոտարական աշխատանքի բնականոն գործունեության ապահովման համար կոնկրետ ոլորտների ուսումնասիրությունից,

2) կազմակերպում է մասնագիտական և գործնական հմտությունների, փորձի, կարծիքների փոխանակում, ինչպես նաև խնդրահարույց հարցերի վերաբերյալ քննարկումներ նոտարների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործման նպատակով,

3) կազմում է մեթոդական ձեռնարկներ,

4) իրականացնում է նոտարական գործունեության որակի ներքին ապահովմանն ուղղված այլ գործառույթներ,

5) մշակում է օրենսդրական փոփոխությունների և լրացումների նախագծեր,

6) միջոցներ է ձեռնարկում նոտարների կողմից միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ապահովման ուղղությամբ:

(փոփոխությունը հաստատված է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ)

XVIII. Պալատի սեփականությունը

82. Պալատի սեփականությունը կազմում են օրենքով սահմանված կարգով նրա հաշվապահական հաշվեկշռում արտահայտված անշարժ և շարժական գույքի բոլոր տեսակները, այդ թվում հողամասերը, շենքերը, շինությունները, դրամական միջոցները, արժեթղթերը և այլ գույքը:

83. Պալատի գույքի ձևավորման աղբյուրներ են հանդիսանում՝

1) Պալատի անդամների անդամավճարները,

2) Պալատի կողմից ստեղծված առևտրային կազմակերպությունների կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները,

3) Պալատին պատկանող բաժնետոմսերից և այլ արժեթղթերից ստացված շահութաբաժինները և եկամուտները,

4) նվիրաբերությունները և կամավոր գույքային ներդրումները,

5) օրենքով չարգելված այլ գույքային ներդրումները:

84. Պալատի կողմից ստացված եկամուտները չեն կարող բաշխվել նրա անդամների միջև:

XIX Պալատի անդամավճարները

85. Անդամավճարները հանդիսանում են Պալատի գույքի ձևավորման հիմնական աղբյուրը և հանդիսանում են նրա սեփականությունը:

86. Անդամավճարը վճարվում է նոտարի կողմից ստացված եկամտից: Հաշվարկման և վճարման նպատակով, որպես եկամուտ համարվում է այն գումարը, որը որպես ծառայության վճար գանձել է նոտարը:

87. Անդամավճարի չափը սահմանվում է Պալատի ընդհանուր ժողովի կողմից:

88. Անդամավճարը ենթակա է վճարման յուրաքանչյուր ամիս՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-ը:

89. Նոտարի կողմից երեք ամիս անընդմեջ Պալատի անդամավճարը չվճարելու դեպքում նոտարի գործունեությունը կասեցվում է:

90. Նոտարների պատճառած վնասների հատուցումը երաշխավորելու համար նոտարների անդամավճարների առնվազն տասը տոկոսը բանկային հաշվում կապիտալացնելու միջոցով նոտարական պալատը ստեղծում է պահուստային ֆոնդ:

Բանկային տոկոսներն ուղղվում են պահուստային ֆոնդի համալրմանը:

Նոտարական պալատի անդամների ժողովը կարող է սահմանել պահուստային ֆոնդ վճարվող տոկոսների առավել բարձր չափ:

Պահուստային ֆոնդից նոտարի պատճառած վնասները հատուցվում են դատական ակտի հիման վրա, եթե վնասների չափը գերազանցում է նոտարի ապահովագրական գումարի չափը, և անհնարին է նոտարի անձնական գույքի հաշվին բավարարել վնասն ամբողջությամբ:

Պահուստային ֆոնդի միջոցները բացառապես օգտագործվում են նոտարի պատճառած վնասի հատուցման նպատակով: Նոտարական պալատի պարտավորություններով պահուստային ֆոնդի վրա բռնագանձում չի տարածվում:

Սույն կետի կանոնները կիրառելի են նաև նոտարին պաշտոնից ազատելու կամ սնանկ ճանաչելու դեպքերում:

(լրացումը հաստատված է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 04.02.2017թ. թիվ 1 որոշմամբ)

XX. Պալատի գույքի տնօրինումը

90. Պալատի ֆինանսական միջոցները (գույքը) տնօրինում է Պալատի նախագահը:

91. Նվազագույն աշխատավարձի 500-ապատիկը չգերազանցող արժեքով գործարքները Պալատի նախագահը կնքում է ինքնուրույն:

92. Նվազագույն աշխատավարձի 500-ապատիկը գերազանցող գումարից մինչև 5000-ապատիկը չգերազանցող արժեքով գործարքները կնքվում են վարչության որոշմամբ:

(լրացումը հաստատված է ՀՀ նոտարական պալատի ընդհանուր ժողովի 26.02.2022թ. թիվ 2 որոշմամբ)

93. Նվազագույն աշխատավարձի 5000-ապատիկը գերազանցող արժեքով գործարքները կարող են կնքվել միայն Պալատի ընդհանուր ժողովի որոշմամբ:

XXI. Կանոնադրության ստորագրումը, փոփոխությունն ու լրացումը

94. Կանոնադրությունը ստորագրվում է Պալատի նախագահի և Պալատի ընդհանուր ժողովի քարտուղարի կողմից:

95. Կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են Պալատի ընդհանուր ժողովի կողմից:

96. Փոփոխություններն ու լրացումները ենթակա են պետական գրանցման օրենքով սահմանված կարգով և ուժի մեջ են մտնում գրանցման պահից:

XXII. Պալատի լուծարումը

97. Պալատը կարող է լուծարվել ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

98. Պալատի լուծարման դեպքում նրա գույքը ուղղվում է Պալատի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ եթե դա անհնար է, ապա փոխանցվում է ՀՀ պետական բյուջե:

Պալատի նախագահ՝

Ժողովի քարտուղար՝